ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
***ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ***
***DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS***

**Երկուշաբթի, 20 դեկտեմբերի 2021 թ.**

**«Հետք» թերթի լրագրող**
**Արմեն Միրզոյանին**

Հարգելի պարոն Միրզոյան,

ի պատասխան Ձեր 13.12.2021 թ. հարցման՝ հայտնում ենք, որ Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ տալու կարգը սահմանվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրի 109-րդ հոդվածով: Այս կամ այն պետությանը դիտորդի կարգավիճակ շնորհելու հարցը պահանջում է կոնսենսուսային որոշում, որի կայացումից առաջ ԵԱՏՄ շրջանակներում նախատեսված են խորհրդակցություններ՝ նաև նշյալ քայլի տնտեսական նպատակահարմարությունը պարզելու նպատակով:

Այս պահի դրությամբ որևէ պետության կողմից ԵԱՏՄ դիտորդի կարգավիճակ ստանալու հայտ չկա:

***Կատարող՝ Արտաքին գործերի նախարարություն***

**Վարչության պետ՝** **Արմեն Խաչատրյան**

*Հեռախոս՝ (374 10) 52-87-12*
*Phone: (374 10) 52-87-12*
*Էլ.փոստ՝ press@gov.am*